***272. ԽԱՉՔԱՐԻ վրա, որը դրված է եղել ս. Աստվածածնի մուտքի մոտ.***

ի թուին :ՉԲ: (1253) ես Վաչէ, ուրդի Աքուասլայ կանգնեցի զխաչս պարոն Թուրքին. որք կարդայք յիշեցէք ի Քս.:

Ծանոթ. *Խաչքարն այժմ չկա. Թուրք անունը կասկածելի է (խմբ.)։*

Հրատ. *Ջալալեանց*, II, 241։

## 12. ԿԻՁԱՆ ԳՅՈՒՂ

*Գյուղից 5—6 կիլոմետր դեպի արևմուտք, բարձր լեռնագագաթի վրա գտնվում է «Կիչանի անապատը»։ Համալիրը բաղկացած է երկու խմբից. Ա. մի զույգ մատուռներ, դրանց դիմացը գավիթ և Բ. մի քիչ հեռուն եկեղեցի՝ շինված* XVIII *դարում։ Այս բոլորի շուրջը փռված է գերեզմանատունը՝* XVIII—XIX *դարերի տապանաքարերով։*

***273. ԽԱՉՔԱՐ, մեծ, ագուցված է հարավային մատուռի արևմտյան պատին (երեսով գավթի մեջ), ստորին մասում մնացել է 6 տող.***

ԹԻՎՈԽ ԷՍՃԱՅ
ՐԸՍՍԵԴ· ՍՆՈՍԿ
ԱՆԳՆԵՅԻ ԽԱՂՍՔ
ԱՐԵՃԽԱԽԱՃՈԳՈՅԻՄՈ
ԾՆՈՂԱՅԻՄՈՅՈՅՔԿԱ
ՐԴԱՅՔՁԻՍՅԱՂԱԻԹՍ

ԹԻՎ. :ՈԽ: (1191) ԵՍ ՀԱՅ|Ր ԸՍՏԵՓԱՆՈՍ Կ|ԱՆԳՆԵՑԻ ԽԱՉՍ Բ|ԱՐԵՀԽԱԻՍ ՀՈԳՈՑ ԻՄՈ,| ԾՆՈՂԱՑ ԻՄՈՑ. ՈՅՔ ԿԱ|ՐԴԱՑՔ ՁԻՍ ՅԱՂԱԻԹՍ [ՅԻՇԵՑԷՔ]:

Ծանոթ. *Վերջից կտրված է։ ԲԱՐԵՀԽԱԻՍ համարում ենք բարբառային (խմբ.)։*

***274. ԵԿԵՂԵՑՈՒ հարավային մուտքի կիսակամար բարավորի վրա, արտաքուստ.***

ԹՎՌՄԸ
ՅԻՇԱՏԱԿԷՍՐ
ԵԿԵՂԵՑԻՍՄԻՆԱՍ
ԻՈՐԴԻՊԱՊԱՍԻՆԱՂ
ՕԹԻԻՔՅԻՇԵՑԷՔԵԻ
ԱԾԸՋՁԵՋՅԻՇԷԱՄԷՆ

ԹԻՎՆ :ՌՄԸ: (1759), ՅԻՇԱՏԱԿ Է ՍՐ. ԵԿԵՂԵ-ՑԻՍ ՄԻՆԱՍ|Ի ՈՐԴԻ ՊԱՊԱՍԻՆ, ԱՂ|ՕԹԻՒՔ ՅԻՇԵՑԷՔ ԵՒ ԱԾ. ԸԶՁԵԶ ՅԻՇԷ. ԱՄԷՆ:

***275. ՏԱՊԱՆԱՔԱՐ, մեծ, տափակ, երեսին գավազան և 2 տող.***

ԱՅՍԷՏԱՊԱՆՏՐԳՐԻԳՈՐԻՆ:ՈՐԷՐՄԻԱԲԱՆԽՕԹ
ԱՎԱՆՔԻՆՍԱՅՈՐԴԻԷՐՍԻՄԷՕՆԻՆ:ՌԲ·ՃՄԷԿԹՆ

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՏՐ. ԳՐԻԳՈՐԻՆ, ՈՐ ԷՐ ՄԻԱԲԱՆ ԽՕԹ|ԱՎԱՆՔԻՆ, ՍԱՅ ՈՐԴԻ ԷՐ ՍԻՄԷՕՆԻՆ :ՌԲՃ ՄԷԿ ԹՎԻՆ. (1752):

## 13. ԴԱՋԱՆՁԻ ԳՅՈՒՂ

***276. Ս. ԳԵՎՈՐԳ եկեղեցու մուտքի բարավորի վրա.***

Սուրբ Գէորգայ [է] եկեղեցիս. թվ. :ՌՃԻ: (1671):

Հրատ. *Բարխուդարեանց*, 213։

*277. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ վրա, որը գտնվելիս է եղել ս. Գևորգի արևմտյան պատի մոտ, մի երեսին հեծյալ, ձեռքին սուր, որը բարձրացրել է ձիուց իջած այլ մարդու գլխին, վերջինս ձեռքին նույնպես սուր ունի.*

Այս է տապան Ղապաս որդի Ցովանի · · ·չբէ եղբարսն զայն ոտացօն. թվ· ՌԶ: (1557), եկաւ Երկրիս, ըաղ գեղ · · · ցայֆ· վերջին դպա մէ տեսար ապար եկաւ մեզ վերայ ՀԾ: (700) բօպկոլայ եկաւ, իմ ֆարէն չի կարաց օնել. յեղայ մաքի ճաղարն դան ապանեցին.

*ՁԻԱՎՈՐԻ ԳԼԽԻՑ ՎԵՐ.*

·Բառս բեռա. որ է եղբարսաաց պարոն:

Ծանոթ. *Մենք այս վալրը այցելել չենք կարողացել։*

*Հրատ. Բարխուդարեանց, 213—214։*

## 14. ԿՈՃԴՈՏ ԳՅՈՒՂ

*Այս գյուղի սահմաններում եղել են երեք խումբ հուշարձաններ։*

*Ա.* Ամենափրկիչ վանք. *գտնվում է գյուղից դուրս, բարձր սարահարթի վրա. փոքր և գմբեթավոր եկեղեցի է, այժմ կանգուն։ Շրջապատված է մեծ և հին գերեզմանատնով, ուր բազմաթիվ խաչքարեր ընկած են երեսնիվայր և կիսովին խրված հողի մեջ. դրանցից երկուսը շուռ ավեցինք ստուգելու նպատակով. բոլոր խաչքարերը շինված են ավազաքարից, այդ պատճառով էլ հողի մեջ քայքայվել են զարդերն ու արձանագրությունները, բայց ընդհանուր ոճով ավելի հին են, քան XIII դարը։*

*Բ.* Կիսավեր մատուռ. *գտնվելիս է եղել գյուղի հանդում, Թխախոռ կոչված գյուղատեղաց վեր, շուրջը՝ ընդարձակ գերեզմանատուն։ Մենք չենք տեսել, մի խաչքարի արձանագրությունն առնում ենք Բարխուդարյանից։*

*Գ.* Ս. Աստվածածին եկեղեցի. *թեև հին, բայց Բարխուդարյանցի ժամանակ փլած և փայտով ծածկված. եկեղեցու շուրջը եղել է գերեզմանատուն. այս ես չենք տեսել և արձանագրությունը (խաչքարի). առնում ենք Բարխուդարյանցից։*

*278. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆՔԻ մուտքի կիսակամար ճակատաքարի վրա 8 տող.*

ԻՀԱՅՐԱՊԵՄՈՒԹԵ ՄՐՅԱԿ
ՈԲՈՍԱՅԵԻՅԻՇԽԱՆՈՒԹԵՎԱԽՏԱՆ
ԳԱՅՈՐԴՈՅՀԱՍԱՆԱՅ։ԵՍՅՈՀԱՆ
ԷՍՈՒՍԵՐՈԲՈՒՍԱՐԳԻՍՈՒԳՐԻԳՈՐՈՐԴ
ԻՀԱՐԲԱԾԱՅՐԱՅ։ՇԻՆԵՑԱՔՁԱԾԱԾԻՆՍ
ԻՄԵՐՀԱՅՐԵՆԻՍՅԻ ԱՄԱԿՀՈԳՈՑ
ՄԵՐՈՑ։ԱՂԱՉԵՄՎԱՍՆՁՄԵՁՈՒՁՄԵՐԾՆ
ԱՒԴՔՆՅԱՂԱԻԹՍՅԻՇԵՑԵՔ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵ. ՏՐ. ՅԱԿ|ՈԲԱՍԱՅ ԵՒ ՅԻՇԽԱՆՈՒԹԵ. Վ.ԱԽՏԱՆ|ԳԱՅ, ՈՐԴՈՅ ՀԱՍԱՆԱՅ, ԵՍ ՅՈՀԱՆ|ԷՍ ՈՒ ՍԵՐՈԲ ՈՒ ՍԱՐԳԻՍ ՈՒ ԳՐԻԳՈՐ ՈՐԴԻ|Ք ՀԱՐԲԱԾԱՅՐԱՅ, ՇԻՆԵՑԱՔ ԶԱԾԱԾԻՆՍ|Ի ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՑՍ. ՅԻՇԱՏԱԿ ՀՈԳՈՑ| ՄԵՐՈՑ: ԱՂԱՉԵՄ Վ.ԱՍՆ ՁՄԵՁ ՈՒ ՁՄԵՐ ԾՆ|ԱՒԴՔՆ ՅԱՂԱԻԹՍ ՅԻՇԵՑԵՔ:

Ծանոթ. *Ժամանակը որոշվում է Հասանի որդի Վախթանգի հիշատակումով, որը մահացել է 1214 թվականին։*

*Հինգերորդ տողում ՀԱՐԲԱԾԱՅՐ անունը հնարավոր է անջատ վերծանել, կա և՝ ՀԱՐԲ ԾԱՅՐ=Ծեր անուն։*